# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Խաչպար ՍՊԸ-ն ՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 25 | Ախտահանիչ միջոց, երկկոմպոնենտ խտանյութ` նախատեսված մակերեսների և գործիքների ախտահանման և մաքրման համար: | Մեգաբակ | Ինտերսեն պլյուս | <<Մեգաբակ խտանյութ, 1 լ>>: Որպես ազդող նյութ, միջոցը պարունակում է դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ (7,5±0,5%), Ն,Ն-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին (5,0±0,5%), պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ (2,5±0,5%), ինչպես նաև` ֆունկցիոնալ և տեխնոլոգիական բաղադրիչներ: Խտանյութի պահպանման ժամկետը 5 տարի է: 1 լիտր խտանյութից ստացվում է 0.5%-անոց 200 լիտր աշխատանքային պատրաստի լուծույթ, որը պիտանի է 41 օր, նախատեսված է բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, (այդ թվում` տուբերկուլոզի հարուցիչների, թեստավորված Միկոբակտերիում տեռռայի նկատմամբ), ներհիվանդանոցային և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | անաէրոբ վարակների, Կանդիդա և Տրիխոֆիտոն տեսակի սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված Ասպերգիլուս նիգերի համար), վիրուսների , հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա), միջոցն օժտված է հատկություններով մակաբուծային հիվանդությունների հարուցիչների (նախակենդանիների ցիստեր և օոցիստեր, որդերի ձվեր և թրթուրներ) նկատմամբ: Ախտահանիչ միջոցը նախատեսված է բոլոր տեսակի մակերեսների և սարքավորումների ախտահանման համար, բժշկական նշանակության գործիքների, Էնդոսկոպների նախամանրէազերծումային մաքրման, ինչպես նաև կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ ախտահանման համար՝ երեքը մեկում միաժամանակ: Ոչնչացնում է ճարպի, յուղի, մրի, սպիտակուցային նստվածքների և շատ այլ դժվար հեռացվող նյութերի բծերը և նստվածքները: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 24 փետրվարի 2022թ., թիվ 808-L: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Խաչպար ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 25 | | | | |